




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ 2010-2013ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2012Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



ՎԱՆԱԶՈՐ - 2012Թ.

Հաստատված է ՀՏԿ նախարար, փոխվարչապետ
Ա. Գևորգյանի 22.02.2012թ. թիվ 23-Ա հրամանով
(հավելված 2)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ 2010-2013թթ.
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
2012թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

Բովանդակություն

Ներածություն		3
1.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ	5
2.	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	7
2.1.	Կրթություն և մշակույթ	7
2.2.	Առողջապահություն	9
2.3.	Սոցիալական պաշտպանություն	11
3.	ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	13
3.1.	Գյուղատնտեսություն	13
3.2.	Բնապահպանություն	15
4.	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	17
4.1.	2012թ ՀՀ պետական բյուջեով Լոռու մարզում նախատեսված շինարարական աշխատանքները	18
5.	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	21
5.1.	Ճանապարհաշինություն	21
5.2.	Զրամատակարարում ու ջրահեռացում	22
5.3.	Գազամատակարարում	25
6.	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	26
6.1.	Տարածքային կառավարում	26
6.2.	Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում	26
6.3.	Քաղաքացիական հասարակություն	27
7.	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ	32
8.	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ	35
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 1, 2, 3, 4		
Ըստ ոլորտների Լոռու ՄԶԾ-ի 2012թ. համար ծրագրավորված միջոցառումները և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված իրատեսական ներդրումային ծրագրերը և միջոցառումները		
Կրթություն, մշակույթ և սպորտ	հավելվածներ 1.1 և 1.2	40
Առողջապահություն և սոցիալական ապահովություն	հավելվածներ 2.1 և 2.2	42
Գյուղատնտեսություն և բնապահպանություն	հավելվածներ 3.1 և 3.2	44
Քաղաքաշինություն և ենթակառուցվածքներ	հավելվածներ 4.1, 4.2 և 4.3	46
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀՀ 2012 թ. պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի (Լոռու մարզ), ծախսատեսակների և կատարողների		53
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀՀ 2012 թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքը		56
6.1.	Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը	56
6.2.	Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը	59
6.3.	Գյուղատնտեսության ոլորտի տրամաբանական հենքը	64
6.4.	Քաղաքաշինության ոլորտի տրամաբանական հենքը	69
6.5.	Ենթակառուցվածքների զարգացման տրամաբանական հենքը	75
6.6.	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի տրամաբանական	76

	<i>հենք</i>	
--	-------------	--

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1130-Ն որոշմամբ հաստատվել է Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի:

ՄԶԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,
- ❖ Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք, համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49-Ա որոշման, գործել են հետևյալ ուղղություններով.

- Մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն,
- Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- Քաղաքաշինություն,
- Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում),
- Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարություններն ընդգրկվել են ՄԶԾ-ում: Գնահատվել են ՄԶԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները: Ըստ ՄԶԾ-ի

իրականացման գաղափարախոսության, յուրաքանչյուր տարվա աշխատանքային պլանները կազմելու ժամանակ, երբ հաստատված կլինեն տվյալ տարվա պետական բյուջեից մարզին հատկացված ֆինանսական միջոցները և համայնքային բյուջեները, կվերանայվեն տվյալ տարվա իրականացվելիք միջոցառումների ցանկերը՝ ըստ ոլորտների և նրանց ֆինանսավորման աղբյուրները: Սույն փաստաթղթի կազմման հիմնական նպատակը 2010-2013թթ. մարզային զարգացման ծրագրով նախատեսված և 2012թ. ընթացքում իրականացվելիք միջոցառումների տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ) նկարագրելն է:

ՏԱՊ-ի մեջ համադրվում են.

- ՄԶԾ-ում տվյալ տարվա համար նախատեսված միջոցառումները,
- պետական բյուջեից տվյալ տարում մարզին հատկացված միջոցները, այդ թվում Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի միջոցով հատկացված դրամաշնորհները,
- Այլ կազմակերպությունների կողմից կամ աղբյուրներից ֆինանսավորվող ու իրականացվող միջոցառումները,
- Նախորդ տարվա ՏԱՊ-ով նախատեսված ոլորտային զարգացման միջոցառումների մասնակցային մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունները (իրականացվում է ՄԶԾ-ի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից՝ մարզպետարանի աշխատակազմ),
- Նախորդ տարվա ՏԱՊ-ով նախատեսված ոլորտային զարգացման միջոցառումների ազդեցության գնահատման արդյունքները, որոնք չափվում են շահառուների բավարարվածության աստիճանով և իրականացված միջոցառումների հեռահար արդյունքներով ու ազդեցությամբ (իրականացվում է տեղական ՀԿ-ների և անկախ փորձագիտական մասնագիտացված խմբերի կողմից):

2012թ. ՏԱՊ-ի կազմման ընթացքում օգտագործվել են նախորդ տարվա ՏԱՊ-ի արդյունքների մոնիտորինգի հաշվետվությունները, և սույն փաստաթուղթը կազմվել է ոլորտային աշխատանքային խմբերում մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի, պետական բյուջեից մարզին հատկացված ֆինանսական միջոցների և համայնքային բյուջեների հնարավորությունների քննարկումների ու իրատեսական (հաշվի առնելով նաև համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը) գնահատման արդյունքում:

2012թ. տարեկան աշխատանքային պլանի նպատակներն են.

- Համախմբել բոլոր ֆինանսական և մարդկային միջոցները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ,
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ների արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ,
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում,
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար,
- Հնարավորության դեպքում սահմանել միջոցառումների իրականացման ժամկետները՝ ըստ եռամսյակների,
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար 2012 թվականի պատասխանատու է լինելու մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են Ծրագրի իրականացման մոնիտորինգի աշխատանքները: Բոլոր նախատեսվող միջոցառումները մանրամասնեցված են Հավելվածում արձանագրված «Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքում»:

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արդյունաբերության, Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2012 թ. ՄՁԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
- ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:

Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսման համար: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ընդունված մարզի գերակա ոլորտների զարգացման հայեցակարգային դրույթների հետևողական իրականացումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումներն արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2010-2013թթ. Լոռու մարզի ՄՁԾ-ով կարիքի գնահատում չի կատարվել, քանի որ այս բնագավառում ներդրումների բացարձակ մեծամասնությունն ընկնում է մասնավոր հատվածի վրա, իսկ

2009 թվականին՝ ՄՁԾ-ի կազմման ժամանակ համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէր գոնե մոտավոր կանխատեսել ճյուղի զարգացման հիմնական ուղղությունները, ներդրումների չափերը:

Չնայած համաշխարհային տնտեսությունում տագնապալի որոշակի սպասումների, 2012 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից պլանավորվել է ընդամենը շուրջ **26,284.20** մլն դրամի ներդրումներ, մասնավորապես.

- ❖ Հանքարդյունաբերություն 26,064.2 մլն դրամ
(«Ախթալայի ԼՀԿ», «Թեղուտ» և «Սագամար» ՓԲԸ-ներ)
- ❖ քիմիական արդյունաբերությունում 220.0 մլն դրամ
(«Վանաձոր-Խիմպրոմ» ՓԲԸ)

Մարզի արդյունաբերության և մասնավոր հատվածում ներդրումների գերակշիռ մասը հանքարդյունաբերության ճյուղում է:

ՀՀ Լոռու մարզի ՄՁԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը Արդյունաբերության և մասնավոր հատված ոլորտում

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ճեղվածք (մլն. դրամ)
1. Արդյունաբերություն և մասնավոր հատված	0.00	26,284.20	+26,284.20
<i>որից՝</i>			
Պետական բյուջե			
Համայնքների ներդրումներ			
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ			
Մասնավոր ներդրումներ	0.00	26,284.20	

Ներդրումներն պլանավորվում են իրականացնել մարզի արդյունաբերության այն ճյուղերում, որոնց արտադրանքի գերակշիռ մասն իրացվում է արտերկրում: Միջազգային շուկայում բարենպաստ զարգացումների դեպքում ընթացիկ տարում հնարավոր է նաև ներդրումների ծավալի զգալի աճ արդյունաբերության այլ ճյուղերում՝ մասնավորապես էներգետիկայում, թեթև արդյունաբերությունում: Արդյունքում շուրջ 25%-ով կաճի արտահանման ծավալները, կբացվեն ավելի մոտ 400 նոր աշխատատեղ:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1. Կրթություն և մշակույթ

Կրթություն

2012թ. Լոռու մարզի կրթության ոլորտում (գերազանցապես հանրակրթության ոլորտում) շարունակվելու է Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական քաղաքականության իրականացումը, մասնավորապես, ապահովելով աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի դրույթների իրականացումը : Հիմք ընդունելով Լոռու մարզում կրթության ոլորտի առկա իրավիճակը՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվել է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Ուշադրություն է դարձվելու միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, 12-ամյա կրթության ուսումնական ծրագրերի, գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական և միասնական քննական համակարգի կատարելագործմանը, ավագ դպրոցների ինստիտուտի հիմնադրմանն ու կայացմանը: Շարունակվել և կատարելագործվել է հատուկ կրթական ու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման գործընթացը (ներառարական կրթություն, որի նպատակով 2012թ. ՀՀ պետբյուջեից հատկացվել է 70,148 մլն դրամ (նախորդ տարում՝ 62,915 մլն դրամ) Վանաձորի թիվ 18 , Ստեփանավանի թիվ 1 և 6 և Ալավերդու թիվ 5 և 8 դպրոցներում թվով 157 (նախորդ տարում՝ 107) երեխաների համար ներառական կրթություն իրականացնելու նպատակով):

Հատուկ ուշադրություն է դարձվելու պարտադիր ուսուցումից սոցիալական պատճառներով դուրս մնացած երեխաներին հանրակրթական համակարգ վերադարձնելու խնդրի վրա:

2012թ. ՏԱՊ-ով շարունակվելու են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման, ավագ դպրոցների հիմնադրման ծրագրերի իրականացման ու կատարելագործման գործընթացները:

ՀՀ Լոռու մարզի ՄՁԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը կրթության ոլորտում

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ճեղվածք (մլն. դրամ)
Կրթություն	1,270.0	316.93	-953.07
Պետական բյուջե		238.0	
Համայնքների ներդրումներ		78.93	
Միջազգային դոնոր կազմակերպություններ		0.0	
Մասնավոր ընկերությունների ներդրումներ		0.0	

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. կրթության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,270.0 մլն** դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **316.93 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **238.0** մլն դրամը պետ. բյուջեով, որից 59.0 մլն-ը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:

2012թ-ի պետական բյուջեի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կրթական հաստատությունների հիմնանորոգման ծրագրով նախատեսվել է 179.0 մլն դրամ, այդ թվում՝

- Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում - 153.0 մլն դրամ
- Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում - 20.0 մլն դրամ
- Լեռնապատի դպրոցի միջանցքի սալիկապատում - 6.0 մլն դրամ

2012 թվականին Լոռու մարզպետարանի մասով, հրատապ աշխատանքների պլանով նախատեսված է 3 դպրոցների մասնակի նորոգում, 1 ՆՈՒՀ-ի կառուցման համաֆինանսավորում և 2 ՆՈՒՀ-երի հիմնանորոգում:

Համայնքային ներդրումների հաշվին նախատեսված է 2 արտադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում (վերանորոգում), 3 մանկապարտեզների մասնաշենքերի կառուցում (որից մեկը համաֆինանսավորմամբ), մեկ ՆՈՒՀ-ի ձեռք բերում և 1 ՆՈՒՀ-ի հիմնանորոգում:

Մշակույթ

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. մշակույթի և սպորտի ոլորտների համար պահանջվող գումարը եղել է **350.00 մլն** դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **367.80 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **338.0** մլն դրամը պետ. բյուջեով, որից 295.0 մլն-ը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:

ՀՀ Լոռու մարզի ՄՁԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը մշակույթի և սպորտի ոլորտներում

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ճեղվածք (մլն. դրամ)
Մշակույթ և սպորտ	350.00	367.80	+17.80
Պետական բյուջե		338.00	
Համայնքների ներդրումներ		29.80	
Միջազգային դոնոր կազմակերպություններ			
Մասնավոր ընկերությունների ներդրումներ			

2012թ. ևս ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները: Մասնավորապես, Վանաձորի Է.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի շենքի

հիմնանորոգման, Արևաշողի, Հարթագյուղի և Գեղասարի համայնքային կենտրոնների կառուցման համար, որոնց նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 295.0 մլն դրամ: 2012թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով կիրականացվեն մարզի մշակութային-պատմական և հոգևոր կոթողների՝ Քոբայրավանքի, Սանահինի վանքային համալիրի և «Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգման աշխատանքները, որոնց համար ՀՀ մշակույթի նախարարությունով տրամադրվել է 43.0 մլն դրամ (15 մլն դրամ Քոբայրավանքի, 18 մլն դրամ՝ Սանահինի վանքի և 10.0 մլն դրամ՝ «Լոռի Բերդ» ամրոցի համար):

2012 թվականին մարզի համայնքների բյուջեներով պլանավորվել է ընդամենը 14 համայնքներում մշակութային օբյեկտների կառուցում կամ հիմնանորոգում ընդամենը 29.80 մլն դրամ:

2.2. Առողջապահություն

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ են. համարվում բուժօժանությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

- Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում,
- Տարբեր մակարդակների բուժհաստատություններում մասնագետներով և սարքավորումներով հագեցվածության ապահովում,
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատում,
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում,
- Շտապ բուժօգնության մատչելիության և սպասարկման որակի բարելավում,
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում, մայրական մահացության կրճատում
- Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցում, առողջ աճի և զարգացման ապահովում:

Այս միջոցառումներից շատերի իրականացումը շարունակական բնույթ ունի, բայց հիմնականում կախված է դոնոր կազմակերպությունների միջոցների և կառավարության շարունակական օժանդակության առկայությունից:

ՀՀ Լոռու մարզի ՄՁԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը առողջապահության ոլորտում

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ճեղքվածք (մլն. դրամ)
Առողջապահություն	298.12	4,901.40	+4,603.28
Պետական բյուջե		248.00	
Համայնքների ներդրումներ		3.40	
Միջազգային դոնոր կազմակերպություններ		4,650.00	
Մասնավոր ներդրումներ			

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. առողջապահության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **298.12 մլն** դրամ, փաստացի պլանավորվել է կատարել **4,901.40 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **248.0** մլն դրամը պետ. բյուջեով, որից 5.0 մլն դրամը՝ հրատապ աշխատանքներով: 2012-2013թթ. նախատեսվում է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիմնանորոգման 3-րդ փուլի աշխատանքների իրականացում, որի համար անհրաժեշտ է մոտ 320 մլն դրամ: Այդ նպատակով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից կհատկացվի է մոտ 130 մլն դրամ, մոտ 16 մլն դրամ ներ է դնելու (պետբյուջեից՝ 146.0 մլն դրամ) «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, իսկ մնացած մոտ 190 մլն դրամի ձեռք բերման հարցը կարգավորման փուլում է:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման (ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 24-ի «ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 699-Ն որոշման խմբագրությամբ՝ կետ 3.1), իրականացվել է «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ի կազմից հակատուբերկուլոզային բաժանմունքի առանձնացման և այդ նույն բաժանմունքը՝ 15 մահճակալով «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ին միացնելու աշխատանքները: 2-րդ փուլով կատարվել է «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ի և Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի միաձուլում՝ ստեղծելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ:

Նորաստեղծ բժշկական կենտրոնի գործունեության համար նախատեսվում է կառուցել նոր շենք՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով և համապատասխան կադրերով: Այդ նպատակով Համաշխարհային բանկի կողմից կներդրվի մոտ 12 մլն ԱՄՆ դոլար (մոտ 4,656,000,000.0 ՀՀ դրամ):

«Շահումյանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի նախկին շենքի հիմնանորոգման աշխատանքների համար ներդրված 30 մլն դրամի (90%-ը՝ ՀՄՆ հիմնադրամի, 10%-ը համայնքի կողմից) ընթացքի մեջ է առողջության առաջնային կենտրոնի հիմնանորոգումը, նախատեսված է ավարտել մինչև 2012թ. մարտ ամիսը:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (նախկին Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր») մանկական վերակենդանացման բաժանմունք բացելու համար վերանորոգվել է տարածք: Մանկական վերակենդանացման բաժանմունքի համար «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից հատկացվել են որոշ բժշկական սարքավորումներ: 2012թ. Բժշկական ժամանակակից սարքավորումներ կհատկացվեն նաև ՀՀ առողջապահության նախարարության և «Վիվասել» ընկերության կողմից:

Կատարված են «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցման նախապատրաստական աշխատանքները: Այդ նպատակով ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից կտրամադրվի է 50-60 մլն. դրամ, իսկ համայնքը կատարել է 2.5 մլն-ի ներդրում: «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2012թ.:

2.3. Սոցիալական պաշտպանություն

2012թ. ՄԶԾ թվով յոթ ծրագրային ուղղություններով առաջարկվում են 10 ծրագրեր, ըստ որոնց՝ կբարձրացվի հանրային իրազեկման մակարդակը սոցիալական ծրագրերի իրականացման վերաբերյալ, առաջնահերթ է դիտվել սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման գործընթացը, որի ընթացքում կզարգացվեն ոլորտում զբաղվածների կարողությունները, կբարելավվի սոցիալական ծառայությունների կառավարումը, կընդլայնվեն բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները, մասնավորապես՝ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում, առաջնահերթ է դիտվել նաև սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական բազայի բարելավումը և այլն:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. սոցիալական ապահովության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է 1,671.66 մլն դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել 119.67 մլն դրամ ծավալով աշխատանքներ, որոնք կիրականացվեն միայն միջազգային դոնոր, մասնավոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ: 2012 թվականին մարզի սոցիալական ապահովության ոլորտում կատարվող ծախսերի համար ՀՀ պետրոյուջեից ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

ՀՀ Լոռու մարզի ՄԶԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը սոցիալական ապահովության ոլորտում

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի (մլն. դրամ)	2012թ.ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ ճեղքվածք (մլն. դրամ)
Սոցիալական ապահովություն	1,671.66	119.67	-1,551.99
Պետական բյուջե			
Համայնքների ներդրումներ			
Միջազգային դոնոր կազմակերպություններ		119.67	
Մասնավոր ներդրումներ			

2012թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել երեխաների և տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը: Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայությունների մատուցողների շարունակական աջակցության ցուցաբերումը: Պետությունը կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցող կառույցների ստեղծման ուղղությամբ: Այս ՄԶԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է, որի իրականացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը:

2012թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր քաղաքականությունը վարձատրվող հասարակական աշխատանքների ծավալի ընդլայնման ուղղությամբ (թեև վերջին տարիներին կրճատվել են աշխատանքների ծավալները): ՄԶԾ առաջարկվել են տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը, բնակչությանը սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումների իրագործմանը, որոնք կներառեն ընտանեկան (խնամատար ընտանիքի ինստիտուտի արմատավորմամբ) և համայնքային (հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման ծրագրեր իրականացնող) կենտրոնների ստեղծման անհրաժեշտության բացահայտման հարցերը, կընդլայնվեն սոցիալական ծառայություններ մատուցող անձանց, այդ թվում՝ ծերերին խնամողների վերապատրաստման ծավալները, սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների տրամադրումը և այլն: Շարունակականություն կապահովվի զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային ապահովման ծրագրի համար: Վերջին երկու տարիներին դանդաղել է բնակապահովման նախորդ տարիների տեմպը. 2010թ. Սպիտակից՝ 2 (բնակարան գնելու համար ֆինանսական աջակցություն), իսկ 2011թ. 7 հաշմանդամ զինծառայողների ընտանիքների (Սպիտակի տ/շրջանում՝ 4, Ստեփանավանի տ/շրջանում՝ 3) հատկացվեց վերջին երկու տարիներին իր կայունությամբ վերահաստատում է պետության կողմից նպատակային ծրագրերի կայացման վճռականությունը: Վերջին տարիներին փախստականների հիմնախնդիրների լուծման կիզակետը թեև փոխադրվել է երկրի կենտրոնական մաս (մասնավորապես՝ Երևան և Կոտայքի մարզ)՝ հիմնախնդրի ամբողջական լուծման նպատակով: 2011թ. ՀՀ նախագահի հանձնարարակով լրացուցիչ 25.0 մլն դրամ հատկացվեց Լոռու մարզին, որի շնորհիվ 6 փախստականների ընտանիքների համար գնվեց բնակարան (մնացորդային 3.4 մլն դրամով պետք է գնվի ևս 1 բնակարան):

Համայնքներում նախապատրաստական զգալի աշխատանքներ են կատարվել ՄԶԾ 2012թ. մեկնարկող ծրագրերի համար, մասնավորապես՝ Սպիտակում տարեցների կենտրոնի հիմնման, Ալավերդի քաղաքում՝ տարեցների ցերեկային կենտրոնի ստեղծման, Վանաձորում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագանների վերանորոգման մարզային ծառայության կայացման ուղղությամբ:

Նշված միջոցառումների իրականացման համար ակնկալվում է պետության, դոնոր կազմակերպությունների և համայնքային ներդրումների անհրաժեշտությունը:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Գյուղատնտեսություն

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտն ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախ է.

1. սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար,
2. բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում,
3. կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում,
4. կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. գյուղատնտեսության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **8,828.00 մլն** դրամ, որից 4,920.00 միլիոնը տեղափոխվել է 2010 և 2011 թվականների չկատարված աշխատանքներից: Ֆինանսական բոլոր աղբյուրների հաշվին փաստացի պլանավորվել է կատարել **371.32 մլն** դրամ ծավալով աշխատանքներ՝ այդ թվում 30.0 միլիոնը՝ պտրբյուջեով:

ՀՀ Լոռու մարզի ՄԶԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը գյուղատնտեսության ոլորտում

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ճեղվածք (մլն. դրամ)
Գյուղատնտեսություն	8,828.00¹	371.32²	-8,456.68
Պետական բյուջե		30.00	
Համայնքների ներդրումներ		17.77	
Միջազգային դոնոր կազմակերպություններ		323.55	
Մասնավոր ներդրումներ			

¹ Այս գումարից 4,920.0 մլն դրամը տեղափոխվել է (կուտակվել է) 2010 և 2011 թվականներից չիրականացված (չֆինանսավորված) աշխատանքներից

² Ոլորտում 2012թ. սպասվում են ևս 3 ներդրումային ծրագրերի իրականացում (1-ը՝ հողագործության, 2-ը՝ անասնապահության ճյուղերում), որոնց ֆինանսավորման ստույգ չափերը դեռևս ճշտված չեն:

Պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2012 թվականին.

- ✓ տարբեր հիվանդությունների դեմ պատվաստում կատանան 72.000 խոշոր եղջերավոր կենդանիներ, 29.000 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 9000 գլուխ խոզեր, 142000 թև թռչուններ (ներկայացված են ոչ պաշտոնական տվյալներ, ֆինանսավորման գումարները ճշտված չեն)
- ✓ մարզի Կուրթան, Գլուկագարակ, Գարգառ, Վարդաբլուր համայնքներում պլանավորվել է տեղադրել 6 հակակարկտային կայան
- ✓ ՀՀ տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակում նախատեսված է մարզ ներկրել խոշոր եղջերավոր կենդանիների՝ հուշտին, սիմենտալ և շվից ցեղերի տոհմային երինջներ:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ մարզում իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 20 մլն ԱՄՆ դոլար: Լոռու մարզից ծրագրի մեջ ընդգրկված են 9 համայնքներ՝ Լորուտ, Դսեղ Չկալով, Քարինջ, Մարց, Շամուտ, Աթան, Ահնիձոր, Դեբետ,: Նախատեսվում է 3 տարվա ընթացքում յուրաքանչյուր համայնքում իրականացնել 240 հազ. դոլարի ներդրում՝ ներառյալ համայնքի համաֆինանսավորումը: Ակնկալվող արդյունքներն են՝ ավելացնել անասնապահության արտադրողականությունը (ներառյալ խոշոր և մանր եղջերավոր անասունների կաթնատվությունը և մսատվությունը), բարձրացնել արոտների օգտագործման արդյունավետությունը, մեծացնել գյուղացիական տնտեսությունների անասնապահությունից ստացված եկամուտները, բարելավել արոտավայրերի վիճակը, նպաստել համայնքների բյուջեների ավելացմանը: 2011թ-ին Լորուտ համայնքի արոտներում իրականացվել է անասունների ջրամատակարարման հետ կապված աշխատանքներ: Նախագծանախահաշվարկային աշխատանքներ են կատարվել Ահնիձոր, Աթան, Շամուտ և Դսեղ համայնքների արոտների ջրարբիացումն ու ճանապարհների վերանորոգումն իրականացնելու համար: Նախատեսված է 2012-2013թթ. նշված համայնքներում գյուղտեխնիկայի ձեռքբերում և կաթի վերամշակման արտադրամասերի կառուցում:

Այցելություններ և ուսումնասիրություններ կիրականացվեն մարզի կաթի վերամշակման արտադրամասերում՝ մարզում արտադրվող կաթի սպառման հետ կապված խնդիրներին համալիր լուծում տալու նպատակով:

Համայնքի անասնաբույժների մասնագիտական գիտելիքների վերապատրաստման նպատակով սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական տեսչության Լոռու մարզային կենտրոնի և ԳԱՄԿ-ի հետ միասին համայնքների անասնաբույժների հետ կանցկացվեն սեմինար խորհրդակցություններ:

Գուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման նպատակով նախատեսվում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

ՈՀԿՀԾ-ի լրացուցիչ ֆինանսավորումով իրականացվող երրորդ կարգի ոռոգման ցանցերի վերականգնման ծրագրի շրջանակներում համայնքների կողմից 15% համաֆինանսավորման սկզբունքով 2012թ. նախատեսված է վերակառուցել Ջրաշեն համայնքի ոռոգման երրորդ կարգի ջրանցքը 1600մ երկարությամբ: Շինարարության նախնական արժեքը կազմում է 54,524.47 հազար դրամ:

3.2 Բնապահպանություն

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. բնապահպանության ոլորտի համար պահանջված գումար նախատեսված չի եղել, սակայն ֆինանսական տարբեր աղբյուրներից փաստացի պլանավորվել է կատարել **169.14 մլն դրամ** ծավալով աշխատանքներ՝ այդ թվում **83.00 մլն դրամը**՝ ՀՀ պետբյուջեից, որից ամբողջը՝ **83.00 միլիոնը**՝ հրատարակ ծրագրով:

ՀՀ Լոռու մարզի ՄՁԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը բնապահպանության ոլորտում

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ճեղվածք (մլն. դրամ)
Բնապահպանություն	0.00	169.14	+169.14
Պետական բյուջե		83.00	
Համայնքների ներդրումներ		86.14	
Միջազգային դոնոր կազմակերպություններ			
Մասնավոր ներդրումներ			

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2012թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Մարզի շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն վնասակար ազդեցության ենթարկվող մարզի համայնքներին 2012թ. բնապահպանական ու առողջապահական ծրագրերի կատարման համար նախատեսված է հատկացնել.
 - ✓ Ալավերդի համայնքին – 94,411.5 հազ. դրամ
 - ✓ Օձուն համայնքին – 23,602.8 հազ. դրամ
 - ✓ Հաղպատ համայնքին – 23,602.8 հազ. դրամ
 - ✓ Աքորի համայնքին – 23,602.8 հազ. դրամ
 - ✓ Հազվի համայնքին – 8,000.0 հազ. դրամ
 - ✓ Ախթալա համայնքին – 1,500.0 հազ. դրամ

Ընդամենը -174,720. 1 հազ.դրամ:

- ՀՀ կառավարության 27.10.2011թ. թիվ 1535-Ն որոշմամբ մարզի 64 անտառամերձ համայնքներ ընդգրկվել են անվճար թափուկ վառելիքայտ ձեռք բերելու արտոնություններից օգտվող բնակավայրերի ցանկում: Մարզպետարանը ամենայն աջակցություն է ցուցաբերելու տվյալ գործընթացի պատշաճ կատարման համար:
- Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի և այլ շահագրգիռ կառույցների մասնակցությամբ կազմակերպել և անցկացնել «Անտառային հրդեհների հրդեհաշիջում և հետևանքների վերացում» թեմայով շտաբային ուսումնավարժության:

- Աջակցել «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամին 2009-2011թթ. ընթացքում շուրջ 500հա հինմադրված անտառմշակույթների լրացման, խնամքի և 2012թ. Սարատովկա, Սվերդլով և այլ համայնքների տարածքներում նախատեսվող անտառտնկման աշխատանքների կազմակերպման հարցում:
 - Ապօրինի ծառահատումները կանխարգելելու նպատակով համագործակցել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՀՀ բնապահպանության նախարարության ԲՊՏ Լոռու տարածքային բաժնի, ոստիկանության Լոռու մարզային վարչության և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
 - «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, մարզում գործող անտառտնտեսությունների հետ ամփոփել բնափայտի պատրաստման պետական առաջադրանքների և անտառվերականգնման վերաբերյալ տվյալները:
 - Հաստատված ծրագրերի համաձայն «Թեղուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել 714 հա անտառտնկման աշխատանքներ, որից մինչ այժմ իրականացրել է 141 հա: 2012թ. Արջուտ և Օձուն համայնքներում նախատեսվում է իրականացնել 47 հա անտառտնկում՝ համապատասխանաբար 17 և 30 հա:
 - ՀՀ կառավարության որոշմամբ կատարվել է Ալավերդու նոր աղբավայրի կառուցման համար 4.6 հա հողատարածքի հողի նպատակային նշանակության փոփոխություն: Աղբավայրի նախագծային արժեքը կազմում է շուրջ 180 մլն. դրամ: ՀՀ պետ. բյուջեից հատկացված 65,000.0 հազ դրամից բացի աղբավայրի կառուցմանն իր ներդրումն է նախատեսել նաև համայնքը՝ մոտ 63 մլն դրամի չափով: Աղբավայրի կառուցման աշխատանքները նախատեսված է ավարտել 2013թ-ին:
- Ընթացքի մեջ է «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ՝ Արևելք» ծրագրով Լոռու մարզում թափոնակուտակումների վերաբերյալ տվյալների հավաքագրման, զույքագրման, և քարտեզագրման աշխատանքները: Արդյունքում մշակվելու է թափոնների կառավարման 15 տարվա ռազմավարություն, որի նպատակն է՝ ամբողջ մարզի տարածքում ստեղծել 2-3 եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրեր: Ըստ նախագծի մարզում այժմ առկա աղբավայրերը կլիկվիդացվեն կամ կոեկուլտիվացվեն ու կկանաչապատվեն:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-փնտեսական զարգացման ծրագրի, քաղաքաշինության ոլորտում (բնակարանաշինություն և բնակարանային փնտեսություն ու բարեկարգում) 2012թ. մարզում նախատեսված էր իրականացնել **16,412.48** մլն դրամ ծավալով աշխատանքներ, սակայն 2012թ. պլանավորվել է **8,011.48** մլն դրամի, այդ թվում **7,896.0** մլն դրամը՝ պետբյուջեով, որից 256.0 մլն դրամը հրատապ աշխատանքների կատարման պլանով:

Ծանոթություն: Աշխատանքներ է տարվում պետական կազմակերպությունների, ներդրողների, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների կողմից ներդրումներ կատարելու համար:

«Լոռու մարզի ՄՁԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը քաղաքաշինության ոլորտում

Ֆինանսավորման աղբյուրը	ՄՁԾ 2012թ. գումարը (մլն. դրամ) որից	Բնակարանաշինություն	Բնակարանային տնտեսություն և բարեկարգում	2012թ. ՏԱՊ գումարը (մլն. դրամ)	Բնակարանաշինություն	Բնակարանային տնտեսություն և բարեկարգում	Ճեղքվածք (մլն. դրամ)
Քաղաքաշինություն	16,412.48	14,885.00	1,527.48	8,011.48	7,661.27	350.21	-8,401.00
Պետական բյուջե				7,896.00	7,640.00	256.00	
Համայնքների ներդրումներ				115.48	21.27	94.21	
Միջազգային դոնոր կազմակերպություններ							
Մասնավոր ներդրումներ							

- Բնակարանաշինության ոլորտում**

2012 թվականին ներդրումներ են նախատեսվում հիմնականում ՀՀ պետ. բյուջեի հաշվին՝ մարզի երկրաշարժից տուժած գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնականաշինություն («Գլենդել Հիլզ» ՓԲԸ): Ծրագրվում է կառուցել 403 անհատական բնակելի տուն: Բնականաշինական աշխատանքներ են նախատեսված նաև Վանաձոր և Տաշիր քաղաքներում՝ համայնքային բյուջեներից ներդրմամբ:
- Բնակարանային փնտեսության և բարեկարգման ոլորտում**

2012 թվականին պետբյուջեի միջոցներով նախատեսվում է Ալավերդու, Ախթալայի, Թումանյանի, Շահումյանի, Գուգարքի, Ստեփանավանի, Ձորագետավանի

բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում, Լոռու մարզպետարանի շենքի վերանորոգում, Ստեփանավանի, Թումանյանի, Գոգարանի փողոցների լուսավորության համակարգերի կառուցման կամ ընդլայնման աշխատանքներ: Համայնքային բյուջեներից (20 համայնք) ներդրումների գերակշիռ մասն ուղղվելու է համայնքներում փողոցային լուսավորության ցանցի կառուցման կամ ընդլայնման աշխատանքներին:

2012թ. ըստ ոլորտների պլանավորվում է հետևյալ շինարարական աշխատանքները.

• **Կրթական համակարգի օբյեկտների**

Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում, Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում, Լեռնապատի դպրոցի միջանցքի սալիկապատում, 3 դպրոցների մասնակի նորոգում, 1 ՆՈՒՀ-ի կառուցման համաֆինանսավորում և 3 ՆՈՒՀ-երի հիմնանորոգում, 2 արտադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում (վերանորոգում), 3 մանկապարտեզների մասնաշենքերի կառուցում (որից մեկը համաֆինանսավորմամբ), մեկ ՆՈՒՀ-ի շենքի ձեռք բերում հիմնանորոգում:

• **Մշակութային օբյեկտների**

Վանաձորի Է.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգում, Արևաշողի, Հարթագյուղի և Գեղասարի համայնքային կենտրոնների կառուցում, մարզի մշակութային-պատմական և հոգևոր կոթողների՝ Քոբայրավանքի, Սանահինի վանքային համալիրի և «Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգման աշխատանքները, ևս 14 համայնքներում մշակութային օբյեկտների կառուցում կամ հիմնանորոգում:

• **Մարզական օբյեկտների**

Գուգարք և Արևաշող համայնքներում մարզական կառույցների հիմնանորոգում:

• **Առողջապահական ոլորտի օբյեկտների նորոգում**

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիմնանորոգման 3-րդ փուլի աշխատանքների իրականացում, Վանաձորի բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցում, «Շահումյանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի նախկին շենքի հիմնանորոգման աշխատանքների ավարտում, «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցում:

• **Շրջակա միջավայրի պահպանության օբյեկտների կառուցում**

Ալավերդու աղբավայրի կառուցում, Վահագնիի և Գյուլագարակի հեղեղատարների կառուցում:

4.1 2012թ. ՀՀ պետական բյուջեով Լոռու մարզում նախատեսված է իրականացնել՝

• **Բնակարանաշինություն**

✓ Երկրաշարժից տուժած բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն - 7640.0 մլն դրամ:

• **Բնակարանային տնտեսություն և բարեկարգում, այլ աշխատանքներ**

➤ ՀՀ Լոռու մարզպետարանով (հրատապ աշխատանքներ)	256.0 մլն դրամ
✓ Ալավերդու բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	50.0 մլն դրամ
✓ Ախթալայի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	25.0 մլն դրամ
✓ Ստեփանավանի բազմաբնակ. շենքերի տանիքների վերանորոգում	11.0 մլն դրամ
✓ Թումանյանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	6.0 մլն դրամ
✓ Գուգարքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	15.0 մլն դրամ
✓ Շահումյանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	12.0 մլն դրամ
✓ Ձորագետավանի բազմաբնակ. շենքերի տանիքների վերանորոգում	5.0 մլն դրամ

✓ Լոռու մարզպետարանի շենքի վերանորոգում	65.0 մլն դրամ
✓ Ստեփանավանի փողոցների լուսավորության ցանցի վերանորոգում	6.0 մլն դրամ
✓ Թումանյանի փողոցների լուսավորության համակարգի կառուցում	5.0 մլն դրամ
✓ Գոգարանի կենտրոնական փողոցի լուսավորության ցանցի կառուցում	4.0 մլն դրամ
• Կրթական ոլորտի հաստատություններ	
➤ ՀՀ Քաղաքաշինության նախարարությունով	179.0 մլն դրամ
✓ Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում	153.0 մլն դրամ
✓ Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում	20.0 մլն դրամ
✓ Լեռնապատի դպրոցի միջանցքի սալիկապատում	6.0 մլն դրամ
➤ ՀՀ Լոռու մարզպետարանով (հրատապ աշխատանքներ)	59.0 մլն դրամ
✓ Գարգառի մանկապարտեզի կառուցում	18.0 մլն դրամ
✓ Ձորագյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում	2.0 մլն դրամ
✓ Օձունի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգում	15.0 մլն դրամ
✓ Դեբետի դպրոցի շենքի վերանորոգում	10.0 մլն դրամ
✓ Վանաձորի թիվ 12 դպրոցի շենքի տանիքի վերանորոգում	11.0 մլն դրամ
✓ Ֆիլիտովոյի դպրոցի ջրամատակարարման համակարգի նորոգում	3.0 մլն դրամ
• Մշակութային հաստատություններ	
➤ ՀՀ Մշակույթի նախարարությունով	43.0 մլն դրամ
✓ Քոբայրավանքի հիմնանորոգում	15.0 մլն դրամ
✓ Սանահինի վանքի հիմնանորոգում	20.0 մլն դրամ
✓ «Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգում	10.0 մլն դրամ
➤ ՀՀ Լոռու մարզպետարանով (հրատապ աշխատանքներ)	295.0 մլն դրամ
✓ Արևաշողի համայնքային կենտրոնի կառուցում	35.0 մլն դրամ
✓ Հարթագյուղի համայնքային կենտրոնի կառուցում	25.0 մլն դրամ
✓ Գեղասարի համայնքային կենտրոնի կառուցում	30.0 մլն դրամ
✓ Վանաձորի Է.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգում	10.0 մլն դրամ
• Առողջապահական հաստատություններ	
➤ ՀՀ Առողջապահության նախարարության ԾԻԳ-ով	86.0 մլն դրամ
✓ Ախթալայի առողջության կենտրոնի շենքի կառուցում	60.0 մլն դրամ
✓ Լոռու մարզային հոգեոնկրոնական դիսպանսերի ցանկապատի կառուցում	10.0 մլն դրամ
✓ Ալավերդու բժշկական կենտրոնի հիմնանորոգման (III փուլ) Համաֆինանսավորում	16.0 մլն դրամ
➤ ՀՀ Լոռու մարզպետարանով (հրատապ աշխատանքներ)	5.0 մլն դրամ
✓ Վանաձորի դիախերձարանի ցանկապատի կառուցում	5.0 մլն դրամ
➤ ՀՄՆՀ-ով	157.0 մլն դրամ
✓ Ալավերդու բժշկական կենտրոնի հիմնանորոգման (III փուլ) Համաֆինանսավորում	130.0 մլն դրամ
✓ Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոնի հիմնանորոգում	27.0 մլն դրամ
• Շրջակա միջավայրի պահպանության օբյեկտներ	
➤ ՀՀ Լոռու մարզպետարանով (հրատապ աշխատանքներ)	83.0 մլն դրամ
✓ Ալավերդու աղբավայրի կառուցում	65.0 մլն դրամ

- | | | |
|---|-----------------------------------|---------------|
| ✓ | Վահագնիի հեղեղատարի կառուցում | 8.0 մլն դրամ |
| ✓ | Գյուլագարակի հեղեղատարի կառուցում | 10.0 մլն դրամ |

Այլ ֆինանսական աղբյուրներով Լոռու մարզում 2012թ. նախատեսված է իրականացնել նաև հետևյալ շինարարական աշխատանքները՝

- | | | |
|---|--|-------------------------|
| • | Համաշխարհային բանկի միջոցներով՝ | 4,650.0 մլն դրամ |
| ✓ | Վանաձորի բժշկական կենտրոնի մասնաշենքի կառուցում | 4,650.0 մլն դրամ |
| • | Համայնքային բյուջեների միջոցներով (ֆոնդային բյուջեներ) | 310.35 մլն դրամ |
| ✓ | 9 համայնքներում մանկապարտեզների և արտադպրոցական ուսումնական հաստատությունների շենքեր կառուցում, վերանորոգում | 78.93 մլն դրամ |
| ✓ | 14 համայնքներում մշակութային կառույցների նորոգում | 29.80 մլն դրամ |
| ✓ | 8 համայնքներում շրջակա միջավայրի պահպանության կառույցների շինարարություն | 86.14 մլն դրամ |
| ✓ | 20 համայնքներում բնակարանայի տնտեսության և բարեկարգման (հիմնականում փողոցային լուսավորության ցանցերի կառուցման կամ ընդլայնման) շինարարական աշխատանքներ | 115.48 մլն դրամ |

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Համաձայն Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, 2012 թվականին ենթակառուցվածքների ոլորտում մարզում նախատեսված էր իրականացնել **3,609.20** մլն դրամ ծավալով աշխատանքներ, փաստացի 2012թ. պլանավորվել է շուրջ **11,458.83** մլն դրամի, այդ թվում **7,625.00** մլն դրամը ՀՀ Պետբյուջեով, որից 595.00 միլիոնը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:

ՀՀ Լոռու մարզի ՄԶԾ-ի 2012թ. համար կարիքների գնահատման և 2012թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը ենթակառուցվածքների ոլորտում

Ֆինանսավորման աղբյուրը	ՄԶԾ 2012թ. գումարը (մլն. դրամ) որից	Զրամատակարարում	Ճանապարհաշինություն	Գազամատակարարում	2012թ. ՏԱՊ գումարը (մլն. դրամ) որից	Զրամատակարարում	Ճանապարհաշինություն	Գազամատակարարում	Ճեղքվածք (մլն. դրամ)
Ենթակառուցվածքներ	3,609.20	434.00	2,378.00	797.20	11,458.83	3,629.71	7,720.64	108.48	+7,849.63
Պետական բյուջե					7,625.00	153.50	7,436.00	35.50	
Համայնքների ներդրումներ					416.33	58.71	284.64	72.98	
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ					3,417.50	3,417.50	0.00	0.00	
Մասնավոր ներդրումներ									

5.1. Ճանապարհաշինություն

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. ճանապարհաշինության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **2,378.00 մլն** դրամ է, սակայն բոլոր աղբյուրներով փաստացի պլանավորվել է կատարել **7,720.64 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **7,436.0** մլն-ը՝ ՀՀ պետբյուջեի միջոցներով, որից 406.00 մլն դրամը հրատապ աշխատանքների պլանով:

2012թ. պետբյուջեի **7,436.0** մլն միջոցներով պլանավորվել է իրականացնել.

• համայնքային նշանակության ճանապարհներ՝ ընդամենը 406.0 մլն դրամ (հրատապ աշխատանքների պլանով)

- ✓ Վանաձոր քաղաքի փողոցների ասֆալտապատում 200.0 մլն դրամ
- ✓ Սպիտակ քաղաքի փողոցների ասֆալտապատում 30.0 մլն դրամ
- ✓ Ստեփանավան քաղաքի փողոցների ասֆալտապատում 54.0 մլն դրամ
- ✓ Ալավերդի քաղաքի փողոցների ասֆալտապատում 30.0 մլն դրամ
- ✓ Տաշիր քաղաքի փողոցների ասֆալտապատում 44.0 մլն դրամ
- ✓ Լոռի-Բերդ տանող ճանապարհի նորոգում 28.0 մլն դրամ
- ✓ հաղպատ գյուղի փողոցների փոսային նորոգում 20.0 մլն դրամ

• ընդամենը 3,130.0 մլն դրամ ներդրմամբ մարզային նշանակության ճանապարհներ

✓ Հ-184 Մ-3 Նորաշեն-Սարչապետ (Նորաշեն-Սարչապետ հատված) հիմնանորոգում	720.0 մլն դրամ
✓ Հարթագյուղ-Խնկոյան միջհամայնքային ա/ճան. վերանորոգում	390.0 մլն դրամ
✓ Արևաշող-Մ-7-2.5կմ	150.0 մլն դրամ
✓ Հ-35-Կաճաճկուտ - 6կմ	360.0 մլն դրամ
✓ Հ-35-Հազվի - 3.5կմ	210.0 մլն դրամ
✓ Հ-35-Ամոջ - 2.1կմ	120.0 մլն դրամ
✓ Հ-35-Ծաթեր - 2կմ	120.0 մլն դրամ
✓ Հ-35-Մղարթ - 3կմ	180.0 մլն դրամ
✓ Անտառամուտ- /Մ-6/ - 7.6կմ	460.0 մլն դրամ
✓ Մեծ Պարնի-Կաթնաջուր - 4.5կմ	270.0 մլն դրամ
✓ Շնող-Արճիս - 4.5կմ	270.0 մլն դրամ

• հանրապետական նշանակության ա/ճանապարհներ՝ ընդամենը 3,700.00 մլն դրամ

✓ Մ-6-Օձուն-Արեւածագ-Հ-24/ կմ0+000÷կմ 8+400	22.4կմ	1,350.0 մլն դրամ
✓ /Մ-3/ - Ստեփանավան – Պրիվոլնոյե - Վրաստանի սահման կմ5+000÷34+200	- 29.2կմ	1,800.0 մլն դրամ
✓ Մ-6-Ծաղկաշատ – 9կմ		550.0 մլն դրամ

• միջպետական նշանակության ա/ճանապարհներ՝ ընդամենը 200.0 մլն դրամ

✓ Մ-6-33կմ-ում թունելների վերակառուցում	200.0 մլն դրամ
---	----------------

2012 թվականին 41 համայնքներ իրենց բյուջեներից համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար պլանավորել են ընդամենը **284.64** մլն դրամի ներդրում:

5.2. Զրամատակարարում ու ջրահեռացում

Անվտանգ խմելու ջրի աղբյուրների մատչելիությունը ոչ միայն Հազարամյակի զարգացման նպատակների և ԿԶԾ-ի կարևոր թիրախներից մեկն է, այլև մարդկային աղքատությունը պայմանավորող գործոններից է: ԿԶԾ-ն կարևորում է խմելու ջրի մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ջրի որակի խնդիրները, որոնք էապես ազդում են բնակչության կենսամակարդակի վրա: Բացի այդ, անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Զրամատակարարման և ջրահեռացման բնագավառում ՀՀ կառավարությունն առանձնացնում է մատակարարվող ջրի որակի բարելավումը, կայուն ջրամատակարարումը, ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև շուրջօրյա ջրամատակարարման աստիճանական ապահովումը:

Զրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների միջոցով և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ:

Լոռու մարզի կարևոր հարստություններից են հանդիսանում խմելու համար պիտանի, բարձր որակի ջրի մեծ պաշարները, որը ներկա իրավիճակում գերազանցում են անհրաժեշտ պահանջարկը: Ջրամատակարարման համակարգը մարզի բնակչությանը և արդյունաբերությանը տարեկան տրամադրում է մոտ 17.1 մլն մ³ խմելու ջուր, որը սպառողին է հասցվում ինքնահոս եղանակով և պոմպակայանների միջոցով: Մարզի ջրային ցանցի երկարությունը 3395.23 կմ է, ջրի ծախսը՝ 1250 լիտր/վրկ, որից ճնշումային՝ 520 լիտր/վրկ: Մարզի 7 քաղաքների և 56 գյուղերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը (Ջ և Զ) կատարվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս արևելյան» տարածքային մասնաճյուղի և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով: Մարզի մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության ջրամատակարարման հարցում:

«Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Վանաձոր քաղաքի և 16 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումը իրականացվում է գերմանական վերականգնման բանկի /KFW/ և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող ծրագրի միջոցով՝ 2012թ.-ին նախատեսված է իրականացնել 3167.5 մլն դրամի աշխատանք:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ը/Ը	Համայնքի անվանումը	Աշխատանքների անվանումը և ծավալը	Ֆինանսավորման աղբյուրը	Արժեքը (մլն դրամ)
1	Մեղվահովիտ	Խմելու ջրի ցանցի կառուցում	ՀՀ Պետ բյուջե	41.0
2	Արեւաշող	Ջրամատակարարման համակարգի կառուցում	ՀՀ Պետ բյուջե	70.0
3	Սպիտակ	Կոյուղագծերի կառուցում	ՀՀ Պետ բյուջե	20.0
4	Լեռնահովիտ	Համայնքային ջրագծի հիմնանորոգում	ՀՀ Պետ բյուջե	10.0
5	Միխայլովկա	Խմելու ջրի ջրագծի վերանորոգում	ՀՀ Պետ բյուջե	4.5
6	Շամլուղ	Լավվար-Շամլուղ գյուղական համայնքների խմելու ջրագծի նորոգում	ՀՀ Պետ բյուջե	5.0
7	Շամլուղ	Կոյուղու նորոգում	ՀՀ Պետ բյուջե	3.0
Ընդամենը ՀՀ Պետ բյուջե				153.5

Անվանումը	Աշխատանքների անվանումը և ծավալը	Ֆինանսավորման աղբյուրը	Արժեքը (մլն դրամ)
«ԼՈՌՈՒ-ԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ			
«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածք	Խմելու ջրի մատակարարման բարելավում և կոյուղագծերի վերանորոգում	KFW Գերմանական վարկային ծրագիր	3,167.5
Ընդամենը			3,167.5
«ՀԱՅԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔ			
Ստեփանավան, Օծուն, Ծաթեր և Սարչապետ	Խմելու ջրի մատակարարման բարելավում	«Ասիական բանկ» վարկային ծրագիր, Վերակառուցման զարգացման Եվրոպական բանկ	250.0
Ընդամենը			250.0
Համայնքային բյուջեներով ներդրումներ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում			
31 համայնք	Խմելու ջրի մատակարարման բարելավում և կոյուղագծերի վերանորոգում	Համայնքների ֆոնդային բյուջեներ	58.71
ԸՆԴԱՄԵՆԸ՝			3,629.71

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. ջրամատակարարման ոլորտի համար պահանջվող գումարը կազմում է **434.0 մլն** դրամ, փաստացի պլանավորվել է կատարել **3,629.71 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **153.5 մլն-ը՝** ՀՀ պետբյուջեի միջոցներով: Ընդ որում պետբյուջեի միջոցները ամբողջովին հրատապ աշխատանքներով է պլանավորված:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Վանաձոր քաղաքի և 16 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումն իրականացվում է գերմանական վերականգնման բանկի (KFW) և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող ծրագրի միջոցով: 2012թ.-ին նախատեսված է իրականացնել 3,167.5մլն դրամի աշխատանք:

Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի բարելավման և արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը: Զրամատակարարող

ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ:

5.3. Գազամատակարարում

Գազաֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակա խնդիր է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 10-12 մ³ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին կնպաստի անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող պրոբլեմների լուծմանը: Ավելի էժան վառելիքի առկայությունը կարող է նպաստել սահմանամերձ համայնքների զարգացմանը, ինչը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն: «Հայֆուսգազարդ»-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարին կից համայնքներում, քանի որ նման միացումները փոքր համայնքներին տնտեսապես ձեռնտու չեն:

01.01.2011թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի գազամատակարարումը վերականգնված և գազաֆիկացված բնակավայրերում վերականգնվել և գազաֆիկացվել են թվով 61346 առանձնատներ և բնակարաններ, որից թվով 29357-ը Վանաձոր քաղաքում:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. գազամատակարարման ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **797.2 մլն** դրամ, փաստացի պլանավորվել է 108.48 մլն դրամ, որից պետ բյուջեից (հրապապ աշխատանքների պլանով) նախատեսվել է **35.5 մլն** դրամ ծավալով աշխատանքներ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ը/Ը	Համայնքի անվանումը	Աշխատանքների անվանումը և ծավալը	Ֆինանսավորման աղբյուրը	Արժեքը (մլն դրամ)
1	Սպիտակ	Փախստականների թաղամասի գազաֆիկացում	ՀՀ Պետբյուջե	4.5
2	Կողես	Գազամատակարարման ներքին ցանցի կառուցում	ՀՀ Պետբյուջե	8.0
3	Մղարթ	Գազամատակարարման ներքին ցանցի կառուցում	ՀՀ Պետբյուջե	15.0
4	Քարինջ	Գազամատակարարման համակարգի ցանցի կառուցում՝ դպրոցի ուղղությամբ	ՀՀ Պետբյուջե	8.0
Ընդամենը ՀՀ Պետբյուջե				35.50
ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեներից ներդրումներ գազաֆիկացման գազամատակարարման ոլորտում (12 համայնքներ)				72.98
ԸՆԴԱՄԵՆԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ				108.48

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

6.1 Տարածքային կառավարում

Տարածքային կառավարման բաղադրիչի նպատակն է մարզում բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը, ապահովելով հետևյալ արդյունքները՝

- ✓ մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստում և ատեստավորում,
- ✓ մարզպետարանի տեղեկատվական և կառուցվածքային կառավարչական համակարգերի բարելավում,
- ✓ մարզպետարանի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների փոխհարաբերությունների բարելավում:

2012թ-ին կշարունակվի մարզպետարանի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և ատեստավորման ծրագիրը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատած ծրագրի համաձայն:

Տարածքային կառավարման հիմնական գերակայություններից մեկը 2012թ. համար հանդիսանում է մարզային և տեղական իշխանությունների փոխհարաբերությունների նոր մեխանիզմների ներդրումը, որը հնարավորություն կտա հաշվի առնել ՏԻՄ-երի կարիքները և նրանց տրամադրել անհրաժեշտ մեթոդական, գործնական օգնություն և բարելավել նրանց կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ մարզպետի կողմից իրականացող իրավական և մասնագիտական վերահսկողության մակարդակը:

Անհրաժեշտ է նաև միջոցներ ձեռնարկել մարզպետարանի և համայնքների միջև էլեկտրոնային կապ ստեղծելու ուղղությամբ, որը կլինի արագ, հասանելի և կբարձրացնի համայնքների իրազեկությունը, ինչպես նաև հիմք կհանդիսանա հետագայում խորհրդակցությունների անցկացման համար:

Կարևորվում է, նաև մարզի համայնքներին համակարգիչներով և ինտերնետ կապով ապահովելու խնդիրը:

6.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

Անհրաժեշտ է զարգացնել համայնքային ծառայության համակարգը, բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները, հասարակության իրազեկության աստիճանը, ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի քննարկման, մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2012թ-ի ՄԾՏ ամենակարևոր խնդիրներից մեկը ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումն է:

Համայնքային ծառայության համակարգի կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ համայնքային ծառայողների, համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստման ուղղությամբ:

2012թ. անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային բյուջեների կազմման, բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները և համայնքի բնակչության ցանկությունները:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցությունը համայնքների հիմնախնդիրների քննարկման և հաստատման գործընթացում, նպատակահարմար է մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ՏԻՄ-երի կողմից կայացվող որոշումներին:

Անհրաժեշտ է իրականացնել հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության վերաբերյալ, որը հիմք կհանդիսանա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար:

6.3. Քաղաքացիական հասարակություն

2012թ. ընթացքում տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, համայնքների ղեկավարների, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ հեռարձակել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

2) Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ «դեմ առ դեմ» սկզբունքով մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:

3) Անհրաժեշտության դեպքում նույն ղեկավարների մասնակցությամբ և մարզի հեռուստաընկերությունների միջոցով կազմակերպել ուղիղ եթերներ, հանրությանը հնարավորություն ընձեռելով իրենց հուզող հարցերն ուղիղ կապով իրավասու անձին ուղղելու և պատասխանը անմիջապես լսելու համար:

4) Մարզի զարգացման ծրագրի իրականացման ընթացքի, ինչպես նաև՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին պատրաստել հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ և դրանք առաքել բոլոր համայնքներին շրջաբերականների, ինտերնետային կայքէջի, մարզում գործող ԶԼՄ-ների միջոցով:

5) Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

6) Պարբերաբար իրականացնել մարզպետարանի ինտերնետային կայքէջի թարմացման աշխատանքներ, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրել մարզպետի

որոշումներն ու կարգադրությունները, ՏԻՄ-երի որոշումները: Գրեթե ամեն օր թարմացնել կայքի նորություններ բաժինը, առանձին բաժիններում տեղադրել մարզային բնույթի տարբեր խնդիրներին վերաբերող տեղեկատվություն:

7) Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

8) Ուշադրություն դարձնել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղեկատվական ցուցատախտակների առկայությանը, և հետեւողական լինել, որպեսզի այդ տախտակների վրա պարբերաբար տեղադրվեն համայնքների ղեկավարների եւ ավագանիների որոշումներ, այլ կարևոր բնույթի տեղեկատվություն:

9) Տարվա ընթացքում, ըստ անհրաժեշտության, հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:

10) Անհրաժեշտությունից ելնելով հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր:

Պ Լ Ա Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2009-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղում
1	2	3	4	5	6	7
1. Մարզպետարանի քաղաքացիական ծառայողների վերապատրաստում և ատեստավորում	Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում	Անձնակազմի կառավարման բաժին	Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ	Տարվա ընթացքում	Պետական բյուջե	Ըստ ՔԾԽ-ի ծրագրի
2. Վարչական հսկողություն մարզի 38 համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ	ՏԻ մարմինների իրականացրած լիազորությունների համապատասխանեցում գործող օրենսդրությանը և վարչական հսկողություն արդյունքների ներկայացում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն	ՀՀ Լոռու մարզպետի կարգադրությամբ կազմված հանձնաժողով	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.2 հոդված, ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված ամենամյա աշխատանքային ծրագրի
3. Մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին ցուցաբերվող մեթոդական օգնության կարիքների մոնիտորինգի անցկացում	Մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին ցուցաբերվող մեթոդական օգնության հստակեցում, պարզեցում և արդյունավետության բարձրացում	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն	Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ կառավարության 01.10.2009թ. «ՀՀ Լոռու մարզի 2009-2013 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1130-Ն որոշում
4. Համանքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (շենքերի, շինությունների) գույքային իրավունքների իրավական պաշտպանվածության մակարդակի բարձրացում	Համանքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (շենքերի, շինությունների) գույքային իրավունքների իրավական պաշտպանվածության մակարդակի բարձրացում	Մարզի համայնքների ղեկավարներ	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն	Տարվա ընթացքում	Համայնքային բյուջեներ	ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 27.12.2010թ. 01\16\7605-10 հանձնարարական

<p>5. ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացում՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Աջակցություն վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքներին ✓ Համայնքներում հանրային ծառայություններ մատուցող շահագրգիռ մարմիններին (կազմակերպություններին) անհրաժեշտ աջակցության ցուցաբերում ✓ Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստման կազմակերպում ✓ Համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների աճի ապահովում ✓ 18 համայնքների ղեկավարների աշխատակազմերի կողմից համակարգչային տեխնիկայի ու ծրագրային ապահովման ձեռքբերում և շահագործում 	<p>Վերապատրաստված համայնքային ծառայողները կնպաստեն ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացմանը:</p> <p>Մատուցվող հանրային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում:</p> <p>Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների բարելավում</p> <p>Համայնքների հիմնախնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների առկայություն և համայնքների կառավարման արդյունավետության բարձրացում</p> <p>Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում</p>	<p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p>	<p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ</p> <p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p>	<p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p> <p>Տարվա ընթացքում</p>	<p>Պետական բյուջե</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Համայնքային բյուջեներ</p>	<p>ՀՀ կառավարության 01.10.2009թ. «ՀՀ Լոռու մարզի 2009-2013 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1130-Ն որոշում</p> <p>ՀՀ կառավարության 01.10.2009թ. «ՀՀ Լոռու մարզի 2009-2013 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1130-Ն որոշում</p>
---	--	---	--	---	--	---

<p>6. Համայնքների բյուջեների կատարման հաշվետվությունները ավագանուն ներկայացնելիս մարզպետի, մարզպետարանի պատասխանատու աշխատակիցների մասնակցություն</p> <p>7. ՏԻՄ –երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում</p>	<p>ՏԻՄ-երի հաշվետվողականության և պատասխանատվության բարձրացում</p> <p>Ապահովել բնակչության առավել արդյունավետ մասնակցությունը տեղական նշանակության հարցերի լուծմանը</p>	<p>Մարզի համայնքների ղեկավարներ</p> <p>Մարզի համայնքների ղեկավարներ</p>	<p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p> <p>ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն</p>	<p>Առաջին եռամսյակ</p> <p>Տարվա ընթացքում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p> <p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	
<p>8. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, ինչպես մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին</p>	<p>Մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում</p>	<p>Տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժին</p>	<p>Մարզպետարանի համապատասխան վարչություններ, բաժիններ</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	<p>ՀՀ կառավարության 01.10.2009թ.«ՀՀ Լոռու մարզի 2009-2013 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1130-Ն որոշում</p>

7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Արտաքին կապերի բնագավառում Լոռու մարզում 2012թ-ին նախատեսվում են հետևյալ աշխատանքները, ուղղված մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2011թ-ի նոյեմբերի 24-ին Բուրլինա Ֆասոյում կայացած **Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիայի** (AIER) համաժողովին, Լոռու մարզն ընտրվել է «Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիա»-ի լիիրավ անդամ: Այս համագործակցության շրջանակներում նախատեսվում է մարտի 15-ից ապրիլի 15-ը Լոռու մարզի կրթական հաստատություններում, Վանաձոր, Ստեփանավան եւ Ախթալա քաղաքներում կազմակերպելու կրթական, մշակութային միջոցառումներ նվիրված Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերին:

Համաձայն 2011թ նոյեմբերի 14-ին, Թայուան քաղաքում ստորագրված ՉԺՀ Շանսի նահանգի եւ Լոռու մարզի միջեւ «ՀՀ Լոռու մարզի եւ ՉԺՀ Շանսի նահանգի միջև բարեկամական կապերի վերաբերյալ» հուշագրի եւ «ՀՀ Լոռու մարզի եւ ՉԺՀ Շանսի նահանգի միջեւ առևտրա-տնտեսական համագործակցության մասին» արձանագրության, դեկտեմբեր ամսին մարզպետարանի կողմից ՀՀ ՏԿՆ է ներկայացվել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Լոռու եւ Տավուշի մարզերում Լավվար-Կողբ տեղամասի 398քառ կմ տարածքում որոնողական եւ որոնողազնահատողական աշխատանքների կատարման վերաբերյալ առաջարկ ՀՀ ԱԳՆ փոխանցելու համար: ՉԺՀ կուղարկվի նաեւ Ախթալայի Լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից առաջարկությունը Ակնկալվում է չինական կողմի պատասխանը

Եվրոպական Տարածաշրջանային Ասամբլեային (ԵվՏԱ) Լոռու մարզի 2010թ-ի նոյեմբերի 11-ից անդամակցությունն ակնկալում է Եվրոմիության և AER-ի հետ տարածքների զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում:

2012 թվին ԵվՏԱ-ի առաջնահերթություններն են

- ✓ Համախմբվածության քաղաքականություն
- ✓ Կլիմայի փոփոխություն եւ էներգետիկ քաղաքականություն
- ✓ Տնտեսական զարգացում, ձեռնարկատիրություն եւ նորարարություն
- ✓ Գյուղատնտեսություն եւ գյուղերի զարգացում

2012թ. շարունակվելու է Ֆրանսիայի հանրապետության Պրովանս - Ալպ Կոտ դ'Ազյուր (ՊԱԿԱ) ռեգիոնի և ՀՀ Լոռու մարզի համագործակցությունը 2008թ. հունիսի 19-ին Մարսել քաղաքում կնքված համագործակցության երկարաժամկետ շրջանակային պայմանագրի շրջանակներում, որն ընդգրկում է հետևյալ բնագավառները՝

- Ֆրանկոֆոնիայի զարգացում
- Զարգացման տարածքային մոտեցումներ
- Գյուղական տուրիզմի զարգացում
- Ճգնաժամի կառավարման զարգացման ծրագիր
- Ռիսկերի կառավարում
- Անասնապահություն
- Աջակցություն ձեռնարկատերերին, կապված է Մարսելի ՊԱԿԱ-ի եւ Լոռու մարզի առևտրա-արդյունաբերական պալատների վերջին 4 տարիների համագործակցության արդյունքների գնահատմամբ:

Մասնավորապես՝

- ❖ 2012թ մարտի 11-15-ին Ֆրանսիայի Մարսել քաղաք կմեկնեն ՎՊՄԻ-ից եւ Եվրոպական Ակադեմիայից Վանաձորի մասնաճյուղից երկու ուսանողներ, մասնակցելու Զրի համաշխարհային ֆորումին:
- ❖ DSF ֆրանսիական կազմակերպության ներքո ստեղծված «Նոենի» հկ-ն մինչև 2012թ-ի հոկտեմբեր կշարունակի իրականացնել «Մոր եւ մանկան պաշտպանություն, ուսուցանողների ուսուցում եւ կատարելագործում» ծրագիրը:

❖ «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, որը գործում է Սպիտակ քաղաքում, 2012թ.-ին կշարունակի առողջապահական հիմնարկների հետ իրականացնել բարեգործական ծրագրեր:

- 2012թ-ին նախատեսվում է Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW գերմանական վարկային ծրագրով «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման 2-րդ փուլ:
- «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ Արեւելք» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում ՀՀ-ում ծրագրի իրականացման համար Լոռու մարզն ընտրվել է պիլոտային շրջան, իրականացնելու է աղբավայրերի գույքագրում եւ կմշակվի թափոնների կառավարման 15 տարվա ռազմավարություն: 2012թ-ի կշարունակվի մարզում աղբավայրերի գույքագրման աշխատանքները:
- Եվրոմիության պատվիրակությունը Հայաստանում կազմակերպության աջակցության առաջարկությունը տարածաշրջանում տնտեսական համահարթեցմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորման հնարավորության վերաբերյալ, մարզպետարանը 2011թ-ի դեկտեմբերին կազմակերպությանն է ներկայացրել է 4 ծրագրային նախագծեր (մարզի տարածաշրջաններում հակակարկտային կայանքների տեղադրում, մրգի եւ վայրի հատապտուղների վերամշակման փոքր արտադրամասերի, մրգի, կարտոֆիլի և բանջարեղենի պահեստավորման, տեսակավորման, փաթեթավորման տնտեսության ստեղծում եւ զբոսաշրջային B&B տների ասոցիացիայի հիմնում):

2012թ-ին նախատեսվում են համագործակցություններ Լոռու մարզպետարանի և ՀՀ-ում իրենց առաքելությունն իրականացնող մի շարք դեսպանությունների հետ (ԱՄՆ, Գերմանիա, Արգենտինա, Մեծ Բրիտանիա, եւ Բելառուս):

Մասնավորապես՝

- ՀՀ-ում Գերմանիայի Դաշնության դեսպանության հետ առաջարկվել է համագործակցություն՝ կոնցենսիոն վարկերի ներդրմամբ, որոնք կնախատեսվեն նախապես ընտրված եւ նախապատվություն ունեցող ծրագրերի համար: Ինչպես նաեւ առաջարկվել է թափոնների վերամշակման բնագավառին վերաբերվող շնորհանդես կազմակերպել Ալավերդու «ԷՅ Սի ՓԻ» ընկերությունում:
 - Արգենտինայի դեսպանության հետ համագործակցության շրջանակներում մարզպետարանի կողմից պատրաստվել են առաջարկներ եւ ներկայացվել ՀՀ ՏԿՆ դեսպանությանը տրամադրելու համար:
 - Կոնկրետ առաջարկություններ են արվել Լոռու մարզի և Բելառուսի Վիտեբսկի մարզի հետ համագործակցության:
- ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի եւ իտալական «Էդյուքեյթ» կազմակերպության համատեղ իրականացված ծրագրի շրջանակներում (2011թ-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմակերպվեց նաեւ Լոռու մարզպետարանի պատվիրակություն այցելություն Իտալիա), որի արդյունքում 2012թ-ին կշարունակվի «Ինտեգրված սոցիալական ծառայություններ» ծրագիրը:
- «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղը կշարունակի իրականացնել մարզի 30 համայնքներում (Թումանյանի 10, Ստեփանավանի 10 եւ Տաշիրի 10 համայնքներում) բազմակողմ ծրագրերի իրականացումը:
- «Փիփլը ին նիդ» (People in Need) Չեխական կազմակերպությունը կշարունակի իրականացնել ծրագրեր մարզում, 2012թ-ին նախատեսվում է ծրագիր Լոռու մարզից արտագաղթի կանխման եւ մարդկանց ետդարձի հետ կապված:
- «Քաունթերփարթ Ինթերնեյշնլ» կազմակերպությունը Լոռու մարզի երեք գյուղական համայնքներում (Դսեղ, Դեբեդ, Ծաթեր) կիրականացնի համայնքային զարգացման 1.7մլն դրամ արժողությամբ փոքր ծրագրեր:

- «Շեն» ԲՀԿ-ն կշարունակի իր աշխատանքները մարզում, հատկապես՝ Լեռնանցք գյուղի ջրագծի կառուցման աշխատանքները: Նախապատրաստական փուլում է Կարմիր Աղեգի համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման ծրագիրը:

Կշարունակեն իրենց բարեգործական աշխատանքները.

- ❖ Ալավերդիում՝ «Հիպոկրատ» հունական բարեգործական բժշկական կենտրոնը (իրականացնում է ազգությամբ հույն, ինչպես նաև սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված անձանց առաջնային բուժօգնություն, դեղորայքի անվճար տրամադրում),
- ❖ Վանաձորում՝ «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական եւ ակնաբուժական Վանաձորյան կենտրոնը,
- ❖ Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները,
- ❖ 2011թ.-ին մարզին «Ֆրանսահայ միության» կողմից տրամադրվել է շարժական ատամնաբուժական կլինիկա, որի միջոցով անվճար ատամնաբուժական բուժօգնություն և սպասարկում կստանան մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը:

**8. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ
2012 ԹՎԱԿԱՆԻՆ**

ՄԶԾ իրագործման համար 2012թ. պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատվել են՝ պահանջվող ընդհանուր գումարը կազմել էր ավելի քան **32,439.46** մլն դրամ, ընդ որում ՄԶԾ-ում հստակեցված չի եղել ֆինանսական աղբյուրները:

2012 թվականի ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմում է **52,000.77** մլն դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **16,458.00** մլն դրամ (այդ թվում **1,293.00** մլն՝ հրատապ աշխատանքների 2-րդ փուլի կատարման պլանով, որից 33.0 մլն դրամի աշխատանքները ավարտվել են 2011թ.), համայնքային ներդրումներ՝ **747.85** մլն դրամ, որոնք նախատեսված են 75 համայնքների ֆոնդային բյուջեներում, միջազգային դոնոր և այլ կազմակերպությունների հատկացումներ՝ 8,510.72 մլն դրամ և մասնավոր հատվածի ներդրումներ՝ **26,284.20** մլն դրամ:

ՀՀ Լոռու մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. տարեկան աշխատանքային պլանը ըստ ֆինանսական աղբյուրների բերված է աղյուսակ 1-ում, իսկ ըստ ոլորտների՝ աղյուսակ 2-ում::

աղյուսակ 1

h/h	Ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ		32,439.46	52,000.77
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ, այդ թվում		16,458.00
	✓ ՀՀ մշակույթի նախարարություն		43.00
	✓ ՀՀ քաղաքաշինության նախարարություն		179.00
	✓ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի մասով		7,640.00
	✓ ՀՀ առողջապահության նախարարություն		86.00
	✓ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն		7,030.00
	✓ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		30.00
	✓ ՀՍՆՀ		157.00
	✓ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագիր)		1,293.00
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ		747.85
III	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՈՆՈՐ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ		8,510.72
	✓ Գերմանական KFW բանկ		3,167.50
	✓ Համաշխարհային Բանկ		4,650.00
	✓ «Ասիական բանկ» վարկային ծրագիր		250.00
	✓ ԱՄՆ ՄԶԳ		277.20
	✓ ՈՀՎՀԾ		46.35
	✓ Այլ միջազգ. կազմակերպություններ		119.67
IV	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ		26,284.20

Աղյուսակ 2

h/h	Ոլորտը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի (մլն. դրամ)	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	Այդ թվում՝ ՀՀ Պետ բյուջեով (մլն. դրամ)	Որից հրատապ ծրագրով (մլն. դրամ)	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի ճեղվածքը (մլն. դրամ)
1.	Արդյունաբերություն և մասնավոր հատված	0.00	26,284.20	0.00	0.00	+26,284.20
2.	Սոցիալական ոլորտներ	3,589.78	5,705.80	824.00	359.00	+2,116.02
2.1.	Կրթություն	1,270.00	316.93	238.00	59.00	-953.07
2.2.	Մշակույթ և սպորտ	350.00	367.80	338.00	295.00	+17.80
2.3.	Առողջապահություն	298.12	4,901.40	248.00	5.00	+4,603.28
2.4.	Սոցիալական ապահովություն	1,671.66	119.67	0.00	0.00	-1,551.99
3.	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	8,828.00	540.46	113.00	83.00	-8,287.54
3.1.	Գյուղատնտեսություն	8,828.00	371.32	30.00	0.00	-8,456.68
3.2.	Բնապահպանություն	0.00	169.14	83.00	83.00	+169.14
4.	Քաղաքաշինություն	16,412.48	8,011.48	7,896.00	256.00	-8,401.00
4.1.	Բնակարանաշինություն	14,885.00	7,661.27	7,640.00	0.00	-7,223.70
4.2.	Բնակարանային տնտես. և բարեկարգում	1,527.48	350.21	256.00	256.00	-1,177.30
5.	Ենթակառուցվածքներ	3,609.20	11,458.83	7,625.00	595.00	+7,849.63
5.1.	Ճանապարհաշինություն	2,378.00	7,720.64	7,436.00	406.00	+5,342.64
5.2.	Զրամատակարարում	434.00	3,629.71	153.50	153.50	+3,195.71
5.3.	Գազամատակարարում	797.20	108.48	35.50	35.50	-688.72
	ԸՆԴԱՄԵՆԸ	32,439.46	52,000.77	16,458.00	1,293.00	+19,561.31

ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1030-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. գնահատված կարիքների և ՏԱՊ-ի

մլն. դրամ

Ոլորտը	2012թ. պահանջվող ֆինանսավորումն ըստ 2010-2013թթ. ՄՁԾ-ի	2012թ. պլանավորված ֆինանսավորումը		Ճեղքվածք
		Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ	
1. Արդյունաբերություն և մասնավոր հատված, որից՝	0.00	26,284.20	0.00	+26,284.20
Պետական բյուջե		0.00	0.00	
Համայնքների ներդրումներ		0.00	0.00	
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00	0.00	

Մասնավոր ներդրումներ		26,284.20	0.00	
2. Սոցիալական ոլորտներ, որից՝	3,589.78	5,705.80	824.00	+2,116.02
Պետական բյուջե		824.00	359.00	
Համայնքների ներդրումներ		112.13		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		4,769.67		
Մասնավոր ներդրումներ		0.00		
2.1. Կրթություն, որից՝	1,270.00	316.93	59.00	-953.07
Պետական բյուջե		238.00	59.00	
Համայնքների ներդրումներ		78.83		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
2.2. Մշակույթ և սպորտ, որից՝	350.00	367.80	295.00	+17.80
Պետական բյուջե		338.00	295.00	
Համայնքների ներդրումներ		29.80		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
2.3. Առողջապահություն, որից՝	298.12	4,901.40	5.00	+4,603.28
Պետական բյուջե		248.00	5.00	
Համայնքների ներդրումներ		3.40		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		4,650.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
2.4. Սոց. Ապահովություն, որից՝	1,671.66	119.67	0.00	-1,551.99
Պետական բյուջե		0.00	0.00	
Համայնքների ներդրումներ		0.00		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		119.67		
Մասնավոր ներդրումներ		0.00		
3. Գյուղատնտեսություն և բնապահպանություն, որից՝	8,828.00	540.46	83.00	-8,287.54
Պետական բյուջե		113.00	83.00	
Համայնքների ներդրումներ		103.9		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		323.55		
Մասնավոր ներդրումներ		0.00		
3.1. Գյուղատնտեսություն, որից՝	8,828.00	371.32	0.00	-8,456.68
Պետական բյուջե		30.00	0.00	
Համայնքների ներդրումներ		17.77		

Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		323.55		
Մասնավոր ներդրումներ		0.00		
3.2. Բնապահպանություն, որից՝	0.00	169.14	83.00	+169.14
Պետական բյուջե		83.00	83.00	
Համայնքների ներդրումներ		86.14		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
4. Քաղաքաշինություն, որից՝	16,412.48	8,011.48	256.00	-8,401.00
Պետական բյուջե		7,896.00	256.00	
Համայնքների ներդրումներ		115.48		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
4.1. Բնակարանաշինություն, որից՝	14,885.00	7,661.27	0.00	-7,223.70
Պետական բյուջե		7,640.00	0.00	
Համայնքների ներդրումներ		21.27		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
4.2. Բնակարանային տնտեսություն, բարեկարգում, այլ, որից՝	1,527.48	350.21	256.00	-1,177.30
Պետական բյուջե		256.00	256.00	
Համայնքների ներդրումներ		94.21		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
5. Ենթակառուցվածքներ, որից՝	3,609.20	11,458.83	595.00	+7,849.63
Պետական բյուջե		7,625.00	595.00	
Համայնքների ներդրումներ		416.33		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		3,417.50		
Մասնավոր ներդրումներ		0.00		
5.1. Զրամատակարարում, որից՝	434.00	3,629.71	153.50	+3,195.71
Պետական բյուջե		153.50	153.50	
Համայնքների ներդրումներ		58.71		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		3,417.50		
Մասնավոր ներդրումներ		0.00		
5.2. Ճանապարհաշինություն, որից՝	2,378.00	7,720.64	406.00	+5,342.64

Պետական բյուջե		7,436.00	406.00	
Համայնքների ներդրումներ		284.64		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
5.3. Գազամատակարարում, որից՝	797.20	108.48	35.50	-688.72
Պետական բյուջե		35.50	35.50	
Համայնքների ներդրումներ		72.98		
Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		0.00		
Մասնավոր ներդրումներ		0.00		
ԸՆԴԱՄԵՆԸ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՈՒՄ որից՝	32,459.46	52,000.77	1,293.00	+19,561.31
I ՀՀ պետական բյուջե		16,458.00	1,293.00	
II Համայնքային միջոցներ		747.85	--	
III Միջազգային դոնոր և վարկային կազմակերպություններ		8,510.72	--	
IV Մասնավոր ներդրումներ		26,284.20	--	

Յուրաքանչյուր բնագավառում 2012 թվականի համար Լոռու 2010-2013թթ. ՄԶԾ-ով նախատեսված ծրագրային միջոցառումները, դրանց համար պահանջվող գումարները, ինչպես նաև 2012թ. ՏԱՊ-ով ակնկալվող ներդրումները ներկայացված են հավելվածների մասում՝ 1.1-ից 4.3 հավելվածներում: Ոլորտային աշխատանքային խմբերի և մարզպետարանի աշխատակազմի կողմից հնարավորինս կձեռնարկվեն միջոցառումներ ֆինանսական ճեղքվածքների մեղմման ուղղությամբ:

հավելված 1.1

Կրթություն

Ոլորտը	ՄԶԾ-ով 2012թ. նախատեսված ծրագիր	Գումարը	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագիր	Գումարը	Ֆինանսավորման աղբյուրը	Ճեղքվածք
1	2	3	4	5	6	7
Կրթություն (դպրոցաշինություն)	Վանաձորի թիվ 23 դպրոցի մարզրահիլիճի կառուցում	120,000.0				120,000.0
	Վանաձորի թիվ 9 դպրոցի մարզադահլիճի կառուցում	120,000.0				120,000.0
	Վանաձորի թիվ 11 դպրոցի մասնաշենքի կառուցում	200,000.0				2000,000.0
	Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում	100,000.0	Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում	153,000.0	Պետ. բյուջե	
	Մեծավանի թիվ 2 դպրոցի հիմնանորոգում	200,000.0				200,000.0
	Վանաձորի թիվ 6 դպրոցի հիմնանորոգում	270,000.0				270,000.0
	Ալավերդու թիվ 8 դպրոցի հիմնանորոգում	120,000.0				120,000.0
	Սարահարթի դպրոցի ջեռուցում	30,000.0	Ավարտվել է 2011 թվականին			
	Վանաձորի թիվ 28 դպրոցի հիմնանորոգում	110,000.0				110,000.0
	Նախատեսված է եղել 2013թ-ին		Ալավերդու արհեստագործ. ուսումնարանի հիմնանորոգում	20,000.0	Պետ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Լեռնապատի դպրոցի միջանցքի սալիկապատում	6,000.0	Պետ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Գարգառի մանկապարտեզի կառուցում	18,000.0	Պետ. բյուջե	
				10,000.0	Համ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Ձորագյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում	2,000.0	Պետ. բյուջե	9610.0
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Օծունի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգում	15,000.0	Պետ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Դեբետի դպրոցի շենքի վերանորոգում	10,000.0	Պետ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Վանաձորի թիվ 12 դպրոցի տանիքի վերանորոգում	11,000.0	Պետ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Ֆիոլետովոյի դպրոցի ջրամատակարարման համակարգի նորոգում	3,000.0	Պետ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Վանաձորի արտադպրոցական ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում	10,000.0	Համ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Ախթալայի արտադպրոցական ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում	20,000.0	Համ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Շահումյանի մանկապարտեզի մասնաշենքի ձեռքբերում	900.0	Համ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Ագարակի մանկապարտեզի կառուցում	13,082.13	Համ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Թեղուտի մանկապարտեզի մասնաշենքի կառուցում	2,000.0	Համ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Կաթնառատի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	1,250.0	Համ. բյուջե	
	ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Մեծավանի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	9,700.0	Համ. բյուջե	
ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Մեծավանի արտադպրոցական ՀՈԱԿ-ի շենքի կառուցում	11,000.0	Համ. բյուջե		
ՄԶԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Ծաղկաբերի մանկապարտեզի մասնաշենքի կառուցում	1,000.0	Համ. բյուջե		

Մշակույթ և սպորտ

Ոլորտը	ՄՁԾ-ով 2012թ. նախատեսված ծրագիր	Գումարը	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագիր	Գումարը	Ֆինանսավորման աղբյուրը	Ճեղքվածք
1	2	3	4	5	6	7
Մշակույթ	Հարթագյուղի համայնքային կենտրոնի կառուցում	100,000.0	Հարթագյուղի համայնքային կենտրոնի շենքի կառուցում	25,000.0	Պետ. բյուջե	75,000.0
	Կուրթանի Հնեվանքի նորոգում	50,000.0				50,000.0
	ՄՁԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Քոբայրավանքի հիմնանորոգում	15,000.0	Պետ բյուջե	
	ՄՁԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Սանահինի վանքի հիմնանորոգում	18,000.0	Պետ. բյուջե	
	ՄՁԾ-ում կարիքը գնահատված չի եղել		«Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգում	10,000.0	Պետ. բյուջե	
	ՄՁԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Արևաշողի համայնքային կենտրոնի կառուցում	35,000.0	Պետ. բյուջե	
	ՄՁԾ-ում կարիքը գնահատված չի եղել		Գեղասարի համայնքային կենտրոնի կառուցում	30,000.0	Պետ. բյուջե	
